ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2021թ. օգոստոսի 28-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. Ամբիոնի դասախոսների 2021-2022 ուսումնական տարվա առարկայական ծանրաբեռնվածության ներկայացման հարցը:
2. Ամբիոնի գծով 2021-2022 ուս տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների Google Classroom էլ հարթակում էջերի բացման, առարկայական նկարագրերի, առարկայական թեմատիկ տրոհումների հաստատման հարցը:
3. 2021-2022 ուս տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերի հաստատման հարցը:
4. ՖԻԴԵ-ի և ամբիոնի համագործակցությամբ կազմակերպված «Շախմատը նախադպրոցական հաստատություններում» վերապատրաստման դասընթացների ամփոփման և ամբիոնի աշխատակազմի կողմից մանկապարտեզներում մշտադիտարկումներ իրականացնելու աշխատանքների կազմակերպման հարցը:

ԼՍԵՑԻՆ 1- Ամբիոնի դասախոսների 2021-2022 ուսումնական տարվա առարկայական ծանրաբեռնվածության ներկայացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Վ.Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ– Հաստատել 2021-2022 ուս.տարվա առարկայական ծանրաբեռնվածությունը:

ԼՍԵՑԻՆ 2- Ամբիոնի գծով 2021-2022 ուս տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների Google Classroom էլ հարթակում էջերի բացման, առարկայական նկարագրերի, առարկայական թեմատիկ տրոհումների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ա.Դալլաքյանը, Թ.Նալբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ– Հաստատել 2021-2022 ուս.տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերն ու թեմատիկ տրոհումները

/ծանրաբեռնվածությունը նախօրոք քննարկվել և ներկայացվել է/, երաշխավորել Google Classroom ներբեռնելու համար:

ԼՍԵՑԻՆ 3- 2021-2022 ուս տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ա.Դալլաքյանը, Թ.Նալբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 2021-2022 ուս տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերը:

ԼՍԵՑԻՆ 4- ՖԻԴԵ-ի և ամբիոնի համագործակցությամբ կազմակերպված «Շախմատը նախադպրոցական հաստատություններում» վերապատրաստման դասընթացների ամփոփման և ամբիոնի աշխատակազմի կողմից մանկապարտեզներում մշտադիտարկումներ իրականացնելու աշխատանքների կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը, Մ.Ամիրաղյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ– Որոշեցին, որ ծրագիրը պետք է լինի շարունակական և ներդրվի այլ մանկապարտեզներում ևս, պահպանել համագործակցությունը ՖԻԴԵ-ի և «Շախմատ գիտահետազոտական ինստիտուտի» հետ: Ամփոփել վերապատրաստման արդյունքները, ներկայացնել ամփոփիչ հաշվետվություն, վերլուծել մշտադիտարկումների արդյունքները և ներկայացնել դրանք գիտական հոդվածների տեսքով՝ Ֆիդեի կողմից կազմակերպվող «Շախմատը կրթության մեջ» խորագրով միջազգային կոնֆերանսին:

Նիստի նախագահ՝ *Վ.Կարապետյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2021թ. սեպտեմբերի 22-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. Ամբիոնի 2021-2022 ուսումնական տարվա աշխատանքային պլանի քննարկման և հաստատման հարցը:
2. Առկա բակալավրիատի ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների թեմաների քննարկման և հաստատման հարցը:
3. 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի պրակտիկաների կազմակերպման վերաբերյալ քննարկման և առաջարկություններ կատարելու հարցը: (ԲԿԾ առկա 3-րդ կուրս՝ ուսումնաճանաչողական պրակտիկան /շաբաթական մեկ օր/ և ԲԿԾ առկա 4-րդ կուրս՝ ամփոփիչ ավարտական պրակտիկա /6 շաբաթյա/)
4. 2021-22 ուստարվա 1-ին կիսամյակի դասալսումների ժամանակացույցի և կազմակերպման քննարկման հարցը:
5. Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի 100-ամյակի նախապատրաստական աշխատանքների քննարկման հարցը:
6. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ 1-Ամբիոնի 2021-2022 ուսումնական տարվա աշխատանքային պլանի քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 2021-2022 ուսումնական տարվա աշխատանքային պլանը: Ամբիոնի աշխատանքնային գործունեությունը ծավալել համաձայն աշխատանքային պլանի:

ԼՍԵՑԻՆ 2- Առկա բակալավրիատի ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների թեմաների քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը, Ք.Ասմարյանը, Մ.Ավագյանը, Մ.Ամիրաղյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ– Հաստատել առկա բակալավրիատի ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների թեմաները և ղեկավարներին:

ԼՍԵՑԻՆ 3- 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի պրակտիկաների կազմակերպման վերաբերյալ քննարկման և առաջարկություններ կատարելու հարցը: (ԲԿԾ առկա 3-րդ կուրս՝ ուսումնաճանաչողական պրակտիկան /շաբաթական մեկ օր/ և ԲԿԾ առկա 4-րդ կուրս՝ ամփոփիչ ավարտական պրակտիկա /6 շաբաթյա/)

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Ղազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ– Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ առկա ուսուցման համակարգի 3-րդ կուրսի 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնաճանաչողական պրակտիկան կազմակերպել ս/թ. սեպտեմբերի 14-ից մինչև դեկտեմբերի 21-ը (շաբաթական մեկ օր)՝ առերես: 4-րդ կուրսի 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի մանկավարժական պրակտիկան կազմակերպել ս/թ. հոկտեմբերի 11-ից մինչև նոյեմբերի 19-ը: Պրակտիկաները կազմակերպել առերես՝ ըստ ներկայացված հրամանների, ակտիվացնել յուրաքանչյուր խմբի համար էլեկտրոնային էջ:

ԼՍԵՑԻՆ 4- 2021-22 ուստարվա 1-ին կիսամյակի դասալսումների ժամանակացույցի և կազմակերպման քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ– Հաստատել 1-ին կիսամյակի դասալսումների ժամանակացույցը:

ԼՍԵՑԻՆ 5- Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի 100-ամյակի նախապատրաստական աշխատանքների քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Քննարկել ՀՊՄՀ-ի 100-ամյակին նվիրված միջոցառումների ցանկը, կատարել առաջարկություններ:

ԼՍԵՑԻՆ 5- «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությամբ հեռակա ուսուցման մագիստրոսական կրթական ծրագրի ամբողջական փաթեթի վերանայման և ՀՀ ԿԳՄՍ նախարարություն ներկայացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ– հաշվի առնելով «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության ՄԿԾ հեռակա ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերը և դրանց հիմնավորումները, ներկայացնել Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհդին, Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչությանը, Ուսումնական բաժնին՝ ամբիոնի առաջարկն ուսումնասիրելու, քննարկելու և հետագա ընթացք տալու համար:

Ընթացիկ հարցեր.

ԼՍԵՑԻՆ 6- մանկավարժություն և հոգեբանություն (նախադպրոցական կրթ.) մասնագիտությամբ 2016 թվականի ամփոփիչ ավարտական քննությունից կտրված և 2021 թվականին իր դիմումի համաձայն՝ Նախադպրոցկան մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտությամբ վերականգնված ուսանողուհի Մելինե Մուրադյանի ավարտական աշխատանքի վերնագրի և ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը, Ք.Ասմարյանը, Ա.Խուգեյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել ավարտական աշխատանքի վերնագիրը և ղեկակավար նշանակել Ա.Խուգեյանին:

Նիստի նախագահ՝ *Վ.Կարապետյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2021թ. հոկտեմբերի 21-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մագիստրատուրա 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի առցանց կազմակերպման հարցը (3 շաբաթ):
2. Հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքի թեմաների և ղեկավարների քննարկման և հաստատման հարցը:
3. Ամբիոնի դասախոսների 2021 թվականին հրատարակած հոդվածների, գիտաժողովների նյութերի, գրքերի, ձեռնարկների, դասագրքերի քննարկման և ներկայացման հարցը:
4. 2021-2022 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 1-5 կուրսերի 1-ին և 2-րդ կիսամյակների ամբիոնի գծով դասավանդվող դասընթացների Google classroom էլ.հարթակում էջերի ստեղծման, առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, ուսումնական նյութերի ներբեռնման քննարկման հարցը:
5. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա բակալավրի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների և մագիստրատուրա 1-ին և 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի google classroom էլ. հարթակում ստեղծված էջերում աշխատանքների կազմակերպման հարցը:
6. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ 1- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մագիստրատուրա 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի առցանց կազմակերպման հարցը (3 շաբաթ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ա.Ղազարյանը:

Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մագիստրոսի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի 2-րդ կուրսի 2021-22 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի մանկավարժահետազոտական պրակտիկան նախատեսվում է կազմակերպել նոյեմբերի 2-ից մինչև 20-ը՝ ՀՊՄՀ սկզբնական կրթության ֆակուլտետի

Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա բակալավրի կրթական ծրագրի 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Կազմակերել մանկավարժահետազոտական պրակտիկան ըստ նշված ժամանակացույցի և դասացուցակի, ակտիվացնել պրակտիկայի էլեկտրոնային էջ, տեղադրել համապատասխան փաստաթղթերը:

ԼՍԵՑԻՆ 2- Հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքի թեմաների և ղեկավարների քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ա.Դալլաքյանը, Ս.Մարությանը, Ք.Ասմարյանը, Մ.Ավագյանը, Ա.Խուգեյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների թվով 39 վերնագրերը և ղեկավարներին:

ԼՍԵՑԻՆ 3- Ամբիոնի դասախոսների 2021 թվականին հրատարակած հոդվածների, գիտաժողովների նյութերի, գրքերի, ձեռնարկների, դասագրքերի քննարկման և ներկայացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ա.Դալլաքյանը, Թ.նալբանդյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Քննարկել և հաստատել ամբիոնի դասախոսների 2021 թվականին հրատարակած հոդվածների, գիտաժողովների նյութերի, գրքերի, ձեռնարկների, դասագրքերի ցանկը, տեղադրել համապատասխան ձևաչափում, ուղարկել ամբիոնի էլեկտրոնային հասցեին և ներկայացնել գիտահետազոտական կենտրոն:

ԼՍԵՑԻՆ 4- 2021-2022 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 1-5 կուրսերի 1-ին և 2-րդ կիսամյակների ամբիոնի գծով դասավանդվող դասընթացների Google classroom էլ.հարթակում էջերի ստեղծման, առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, ուսումնական նյութերի ներբեռնման քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Թ.նալբանդյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 2021-2022 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 1-5 կուրսերի 1-ին և 2-րդ կիսամյակների ամբիոնի գծով դասավանդվող դասընթացների Google classroom էլ.հարթակում էջերի ստեղծման, առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, ուսումնական նյութերի, գնահատվող առաջադրանքների տեղադրման աշխատանքների ընթացակարգը՝ ըստ ներկայացված ժամանակացույցի:

ԼՍԵՑԻՆ 5-Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա բակալավրի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների և մագիստրատուրա 1-ին և 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի google classroom էլ. հարթակում ստեղծված էջերում աշխատանքների կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Ամբիոնի էլեկտրոնային էջով ակտիվացնել ավարտական կուրսերի և ՄԿԾ 1-ին կուրսի համար նախատեսված խորհրդատվությունների էլեկտրոնային էջեր, հրավիրել համապատասխան դասախոսներին և ուսանողներին, աշխատանքներն էլ.հարթակում առավել արդյունավետ և թափանցիկ կազմակերպելու համար, տրամադրելով ուսանողներին մասնագիտական գրականություն և նյութեր, պահպանելով հետադարձ կապը նաև առցանց ձևաչափով:

Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ 6- Ամբիոնի դոցենտ, մ.գ.թ Ալլա Մարտինի Դալլաքյանի ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար հրամանագրվելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար Վ.Կարապետյանը ներկայացրեց, որ իր զեկուցագրի և Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան Հ.Խաչատրյանի միջնորդագրի արդյունքում ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Ալլա Դալլաքյանին շնորհվել է ամբիոնի պրոֆեսորի կոչում:

Նիստի նախագահ՝ *Վ.Կարապետյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2021թ. նոյեմբերի 22-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. Խարկովի ազգային մանկավարժական համալսարանի գիտաժողովի կազմակերպչական հարցերի քննարկում, ինչպես նաև նույն համալսարանի ամսագրի խմբագրական խորհրդում Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի մասնագետների ներկայացում (Ս.Մարության և Հ.Սարգսյան):
2. Հեռակա 1-ին կուրսի առցանց խորհրդատվությունների կազմակերպման հարցը:
3. Նախադպրոցական ոլորտի մասնագետների վերապատրաստման ծրագրի ներկայացման, քննարկման և հաստատման հարցը:

ԼՍԵՑԻՆ 1- Խարկովի ազգային մանկավարժական համալսարանի գիտաժողովի կազմակերպչական հարցերի քննարկում, ինչպես նաև նույն համալսարանի ամսագրի խմբագրական խորհրդում Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի մասնագետների ներկայացում (Ս.Մարության և Հ.Սարգսյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Ներկյայացված առաջարկությունն ընդունել ի գիտություն: Շարունակել համագործակցությունը Խարկովի ազգային մանկավարժական համալսարանի հետ:

ԼՍԵՑԻՆ 2- Հեռակա 1-ին կուրսի առցանց խորհրդատվությունների կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Կազմակերպել հեռակա 1-ին կուրսի առցանց խորհրդատվությունները՝ ըստ ուղարկված ժամանակցույցի:

ԼՍԵՑԻՆ 3- Նախադպրոցական ոլորտի մասնագետների վերապատրաստման ծրագրի ներկայացման, քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը, Մ.Ամիրաղյանը:

Ամբիոնի վարիչի պ/կ Վ.Կարապետյանը նշեց, որ ամբիոնի դասախոսներ Ս.Մարությանը, Մ.Ամիրաղյանը, Մ.Ավագյանը, Ս.Մանուչարյանը, Ի.Պոնոմարենկոն,

Ա.Ղազարյանը 2021 թվականի տարբեր ժամանակահատվածներում, որպես վերապատրաստողներ, մասնակցել են Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպած «Դաստիարակների, մեթոդիստների և տնօրենների վերապատրաստման» դասընթացներին:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ամբիոնի դասախոսների ներգրավվածությունը ոլորտի վերապատրաստման գործընթացներին համարել բավականին արդյունավետ և շարունակել մնացած դասախոսների ներգրավումը այդ գործընթացներին:

Նիստի նախագահ՝ *Վ.Կարապետյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

2021թ. դեկտեմբերի 8-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. 2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստման հարցը:
2. Դասախոսների 2021թ. գիտահետազոտական աշխատանքների և ընդհանուր գործունեության հաշվետվությունների ներկայացման հարցը:
3. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի, ԲԿԾ առկա 4-րդ և ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին:
4. 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակում ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունքների վերաբերյալ հարցը:
5. Ամբիոնի դասախոս, մ. գ. թ. Մ. Ամիրաղյանին դոցենտի կոչման ներկայացնելու հարցը:
6. Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի հայցորդներ՝ Մարինե Աբասյանի, Լիլիթ Ղազարյանի, Ժաննա Հարությունյանի ատեստավորման հարցը:

ԼՍԵՑԻՆ 1- 2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Քննաշրջանը կազմակերպել ըստ ուղարկված ժամանակացույցի:

ԼՍԵՑԻՆ 2- Դասախոսների 2021թ. գիտահետազոտական աշխատանքների և ընդհանուր գործունեության հաշվետվությունների ներկայացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել ամբիոնի դասախոսների 2021թ. գիտահետազոտական աշխատանքները և ներկայացնել գիտահետազոտական կենտրոն:

ԼՍԵՑԻՆ 3- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի, ԲԿԾ առկա 4-րդ և ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը, Մ.Ամիրաղյանը, Ս.Հովսեփյանը, Ի.Պոնոմարենկոն:

ՈՐՈՇԵՑԻՆ- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի, ԲԿԾ առկա 4-րդ և ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների կատարման ընթացքը ըստ ղեկավարների ներկայացման համարել բավարար, շարունակել աշխատանքները առերես և առցանց ձևաչափերով, ուղղորդելով ուսանողներին:

ԼՍԵՑԻՆ 4- 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակում ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունքների վերաբերյալ հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- 2021-22 ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացը համարել արդյունավետ, առանց բաղթողումների և առաջացած խնդիրները արդյունավետ լուծելու ուղղությամբ: Ամբիոնի մասնագետի կողմից էլեկտրոնային էջերի կիսամյակային մշտադիտարկումներն ընդունել ի գիտություն և հետագայում շտկել նշված բացթողումները:

ԼՍԵՑԻՆ 5- Ամբիոնի դասախոս, մ. գ. թ. Մ. Ամիրաղյանին դոցենտի կոչման ներկայացնելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը

ՈՐՈՇԵՑԻՆ-Հաշվի առնելով Մարիաննա Գիգոլի Ամիրաղյանի՝ մ. գ. թ-ի գիտական աստիճան շնորհելուց հետո ունեցած գիտամանկավարժական, ուսումնամեթոդական աշխատանքները («Նախադպրոցական հաստատություններում (4-6 տարեկան երեխաների) օտար լեզվի դասավանդման կրթական ծրագիր», «Անգլերենը փոքրիկների համար (4-6 տարեկաններ)» ձեռնարկը), տպագրված հոդվածները, այդ թվում և անձնային կարողունակությունները՝ երաշխավորել նրան զբաղեցնելու Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դոցենտի հաստիքը: Ամբիոնի որոշումը ներկայացնել Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհուրդ:

ԼՍԵՑԻՆ 6-Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի հայցորդներ՝ Մարինե Աբասյանի, Լիլիթ Ղազարյանի, Ժաննա Հարությունյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը, հայցորդներ՝ Մ.Աբասյանը, Լ.Ղազարյանը, Ժ.Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ատեստավորել ամբիոնի հայցորդներ՝ Մ. Աբասյանին, Լ. Ղազարյանին և Ժ. Հարությունյանին՝ ներկայացված հաշվետվությունների հիման վրա:

Նիստի նախագահ՝ *Վ. Կարապետյան*

Նիստի քարտուղար՝ *Թ. Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

2022թ. հունվարի 25-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի կազմակերպման հարցը:
2. Հեռակա 1-ին կուրսի 1-ին և 2-րդ կիսամյակների դասընթացների կազմակերպման հարցը:
3. 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների ուսումնամեթոդական փաթեթների, առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման և google classroom ներբեռնելու հարցը:
4. 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերի հաստատման հարցը:

ԼՍԵՑԻՆ 1- 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Քննաշրջանը կազմակերպել ըստ ուղարկված ժամանակացույցի, հաստատել 2021-22 ուստարվա 1-ին կիսամյակի քննական առարկաների տոմսերը:

ԼՍԵՑԻՆ 2- Հեռակա 1-ին կուրսի 1-ին և 2-րդ կիսամյակների դասընթացների կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Ըստ ներկայացված դասացուցակի կազմակերպել հեռակա 1-ին կուրսի 1-ին և 2-րդ կիսամյակների դասընթացները, քլասրում էլ հարթակում բացել դասընթացների էջերը:

ԼՍԵՑԻՆ 3- 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների ուսումնամեթոդական փաթեթների, առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման և google classroom ներբեռնելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Մ.Ամիրաղյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 2021-2022 ուս.տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների ԱՈՒՄՓ-ները: Ամբիոնի քլաս էջով ամբիոնի մասնագետը տեղադրել է

բոլոր առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները համապատասխան էջերում:

ԼՍԵՑԻՆ 4- 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգման և քննական հարցաշարերի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել քննական հարցաշարերը:

Նիստի նախագահ՝ *Վ. Կարապետյան*

Նիստի քարտուղար՝ *Թ. Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

2022թ. փետրվարի 21-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակի ուսումնա-ճանաչողական պրակտիկայի նախապատրաստման, կազմակերպման հարցը:
2. ՄԿԾ 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի ընթացիկ երկկողմանի հաշվետվությունների ներկայացում՝ ուսանողների և ղեկավարների ներգրավմամբ:
3. Ամբիոնի հայցորդների աշխատանքային գործունեության ընթացքի մասին /հաշվետվություն/:

ԼՍԵՑԻՆ 1- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակի ուսումնաճանաչողական պրակտիկայի նախապատրաստման, կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ա.Ղազարյանը

Պրակտիկայի ղեկավար Ա. Ղազարյանը նշեց, որ նախապատրաստական կոնֆերանսի ժամանակ ներկայացրել է ուսումնաճանաչողական պրակտիկայի ղեկավարներին և խմբերին, ինչպես նաև մանկապարտեզները: Քլասրում էլ հարթակում ըստ խմբերի բացվել են համապատասխան քլաս էջեր:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ըստ նշված ժամանակացույցի կազմակերպել ուսումնաճանաչողական պրակտիկան:

ԼՍԵՑԻՆ 2- ՄԿԾ 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի ընթացիկ երկկողմանի հաշվետվությունների ներկայացում՝ ուսանողների և ղեկավարների ներգրավմամբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ա.Դալլաքյանը, Ս.Մարությանը

ՈՐՈՇԵՑԻՆ- ՄԿԾ 2-րդ կուրսի ուսանողները ներկայացրեցին մագիստրոսական թեզի վերաբերյալ հաշվետվությունները, ուսանողների բոլոր հարցերը ստացան սպառիչ պատասխաններ, հստակեցվեցին հետազոտական աշխատանքների վերջնարդյունքների վերլուծության ընթացակարգը:

ԼՍԵՑԻՆ 3- Ամբիոնի հայցորդների աշխատանքային գործունեության ընթացքի մասին /հաշվետվություն/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Ամբիոնի հայցորդներ՝ Լ.Ղազարյանը և Ժ.Հարությունյանը ներկայացրեցին հաշվետվություններ իրենց աշխատանքային ընթացքի մասին:

Նիստի նախագահ՝ *Վ. Կարապետյան*

Նիստի քարտուղար՝ *Թ. Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

2022թ. մարտի 7-ին տեղի ունեցած նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի.

ՕՐԱԿԱՐԳ

1. Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս Աննա Սիմոնյանի դոցենտի գիտական կոչման ներկայացնելու հարցը՝ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի հետ համատեղ քննարկման արդյունքում:

ԼՍԵՑԻՆ- Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս Աննա Սիմոնյանի դոցենտի գիտական կոչման ներկայացնելու հարցը՝ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի հետ համատեղ քննարկման արդյունքում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ս. Էլբակյանը, Վ.Կարապետյանը, Յ. Յուզբաշյանը, Հ.Խաչատրյանը, Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը, Ք.Ասմարյանը, Մ.Ամիրաղյանը:

Համատեղ նիստին երաժշտության մանկավարժության ամբիոնից մասնակցել են 24 դասախոս, իսկ նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնից՝ 12 դասախոս:

Ելույթ ունեցան երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ս. Էլբակյանը, մ.գ.դ., պրոֆեսոր՝ Յ. Յուզբաշյանը, նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի պրոֆեսոր, Աննա Սիմոնյանի գիտական ղեկավար՝ Սվելանա Մարությանը, ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար Ալլա Դալլաքյանը, Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան, դոցենտ Հեղինե Խաչատրյանը, ամբիոնի դասախոս Մարիաննա Ամիրաղյանը և ամբիոնի վարիչի պաշտոնակատար Վլադիմիր Կարապետյանը:

Ելույթ ունեցողները ներկայացրեցին Աննա Սիմոնյանի կատարած գիտահետազոտական աշխատանքների և ուսումնամեթոդական ձեռնարկի բովանդակությունը, շեշտելով դրանց կարևորությունը, ավագ նախադպրոցականի ճանաչողական գործունեության մեջ առարկայական զարգացման դերը, միջոցները,

պայմանները, բացի դրանից, ելույթ ունեցողները ներկայացրին Աննա Սիմոնյանի գիտամանկավարժական գործունեության արդյունավետությունը, անձնային որակները, մասնագիտական պատրաստվածությունը, ուսանողների հետ տարվող անհատական և խմբային աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ- Քվեարկության արդյունքում ամբիոնի դասախոսները միաձայն (կողմ-36, դեմ-0, ձեռնպահ-0) քվեարկեցին Աննա Սիմոնյանի օգտին և որոշեցին նրա թեկնածությունը դոցենտի գիտական կոչում ստանալու վերաբերյալ դրական կարծիքով ներկայացնել ֆակուլտետի խորհուրդ:

Նիստի նախագահներ՝ *Ս. Էլբակյան*

Վ. Կարապետյան

Նիստի քարտուղարներ՝ *Լ. Սիմոնյան*

Թ. Նալբանդյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

2022 թ. մարտի 21-ին տեղի ունեցած Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ առկա 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի կազմակերպման մասին հարցը:

2. ԲԿԾ առկա 4-րդ և հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և ՄԿԾ 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը:

3. Ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Հեղինե Խաչատրյանի «Մանկան հոգեբանության դասախոսություններ» ուսումնամեթոդական ձեռնարկի քննարկման հարցը:

ԼՍԵՑԻՆ 1- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ առկա 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի կազմակերպման մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ա.Ղազարյանը

Պրակտիկայի ղեկավար Ա. Ղազարյանը ներկայացրեց առկա 3-րդ կուրսերի 2-րդ կիսամյակի վեցշաբաթյա մանկավարժական պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ հարցերը, նշեց պրակտիկայի անցկացման վայրերը, ղեկավարներին և խմբերին: Ամբիոնի մասնագետի կողմից բացված են էլեկտրոնային էջեր քլասրում հարթակում՝ ըստ հրամանների:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ըստ նշված ժամանակացույցի կազմակերպել մանկավարժական պրակտիկան, լինել հետևողական ուսանողների և մեթոդիստների աշխատանքին:

ԼՍԵՑԻՆ 2- ԲԿԾ առկա 4-րդ և հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և ՄԿԾ 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը և ղեկավարները:

Յուրաքանչյուր ղեկավար ամբիոնի վարիչի հանձնարարությամբ նախապես ուղարկել էր իր ուսանողների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվություններ:

Վ.Կարապետյանը նշեց, որ ըստ ներկայացրած հաշվետվությունների բոլոր աշխատանքների տեսական մասն ավարտուն տեսքի է, ուսանողներն աշխատում են հետազոտությունների շուրջ, ղեկավարներին հորդորեց լինել հետևողական և ուղղորդել ուսանողներին, որպեսզի բոլորի աշխատանքները ըստ ներկայացված պահանջների լինեն ավարտուն տեսքի:

ՈՐՈՇԵՑԻՆ- Կազմակերպել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախնական քննարկում, վերհանել ուսանողների խնդիրները և տալ լուծումներ, նախապատրաստվել նախապաշտպանությանը:

ԼՍԵՑԻՆ 3- ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Հեղինե Խաչատրյանի «Մանկան հոգեբանության դասախոսություններ» ուսումնամեթոդական ձեռնարկի քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Հ.Խաչատրյանը, Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը, Ա.Ղազարյանը, Ք.Ասմարյանը, Մ.Ամիրաղյանը:

Գրախոսները, ամբիոնի պրոֆեսորներ՝ Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը, ամբիոնի դոցենտ Ա.Ղազարյանը ներկայացրեցին «Մանկան հոգեբանության դասախոսություններ» ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակման նպատակահարմարությունը Սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողների և նախադպրոցական հաստատությունների մասնագետների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ- նկատի ունենալով, որ տվյալ բնագավառում գրեթե բացակայում են մանկան հոգեբանության վերաբերյալ հրատարակումները մայրենի լեզվով, ինչպես նաև տեսական և գործնական նյութերի դասավանդման նպատակահարմարությունը Սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողների և նախադպրոցական հաստատությունների մասնագետների համար, երաշխավորել Հ.Խաչատրյանի «Մանկան հոգեբանության դասախոսություններ» ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակելու համար:

Որոշումը ներկայացվում է Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհուրդ քննարկման համար:

Նիստի նախագահ՝ *Վ.Ս.Կարապետյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Է.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

2022 թ. ապրիլի 13-ին տեղի ունեցած Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի գծով ԲԿԾ առկա 4-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և ՄԿԾ 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունների արդյունքների և հրապարակային պաշտպանության երաշխավորման հարցը:
2. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսի 2-րդ կիսամյակի մանկավարժահետազոտական պրակտիկայի նախապատրաստման, կազմակերպման հարցը:
3. Ամբիոնի հայցորդ Ժաննա Հարությունյանի թեմայի մասնակի փոփոխությամբ հաստատման և գիտական ղեկավարի վերահաստատման հարցը:
4. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարների կարծիքների և գրախոսությունների կազմակերպման հարցը:
5. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ 1- Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի գծով ԲԿԾ առկա 4-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և ՄԿԾ 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունների արդյունքների և հրապարակային պաշտպանության երաշխավորման հարցը:

- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 4-րդ կուրս թվով 16 ավարտական աշխատանք

- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ 2-րդ կուրս թվով 23 մագիստրոսական աշխատանք

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը, Ս.Հովսեփյանը, Ս.Մանուչարյանը, Մ.Ավագյանը, Մ.Ամիրաղյանը

ՈՐՈՇԵՑԻՆ-

• Նախապաշտպանության արդյունքների վերլուծության հիման վրա (ապրիլի 7-12) երաշխավորել հրապարակային պաշտպանության թվով 16 ավարտական աշխատանքներն ու 23 մագիստրոսական թեզները:

ԼՍԵՑԻՆ 2- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսի 2-րդ կիսամյակի մանկավարժահետազոտական պրակտիկայի նախապատրաստման, կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ա.Ղազարյանը

Պրակտիկայի ղեկավար Ա.Ղազարյանը նախապատրաստական կոնֆերանսի ընթացքում ներկայացրեց պրակտիկայի ղեկավարներին, ուսանողներին և պրակտիկայի ընթացակարգը՝ ըստ ներկայացված դասացուցակի: Ա.Ղազարյանը նշեց, որ պրակտիկայի տևողությունը 3 շաբաթ է՝ 30.03.2022-20.04.2022, ներկայացրեց մանկավարժահետազոտական պրակտիկայի ընթացքում անհրաժեշտ փաստաթղթերը և մասնակիցների գործառույթները:

ՈՐՈՇԵՑԻՆ- Կազմակերպել ՄԿԾ առկա 1-ին կուրսի 2-րդ կիսամյակի մանկավարժահետազոտական պրակտիկան ներկայացված ժամանակցույցով և ըստ ընթացակարգի՝ ամբիոնի էլեկտրոնային էջով, ուսանողներին հրավիրել և կցել համապատասխան քլաս էջերին, ապահովել ՊԴԱ- ուսանող հետադարձ և շարունակական կապը պրակտիկայի ընթացքում:

ԼՍԵՑԻՆ 3- Ամբիոնի հայցորդ Ժաննա Հարությունյանի թեմայի մասնակի փոփոխությամբ հաստատման և գիտական ղեկավարի վերահաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը, Ս.Հովսեփյանը, Մ.Ավագյանը, Ա.Ղազարյանը, Ք.Ասմարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի հայցորդ Ժաննա Հարությունյանի ատենախոսության հաստատված թեման «Շախմատային նախագիտելիքի ձևավորման մանկավարժական պայմանները ավագ նախադպրոցական տարիքում» վերաձևակերպել և հաստատել հետևյալ վերնագրով «Շախմատային նախագիտելիքի ձևավորման մանկավարժական պայմանները

նախադպրոցական հաստատություններում» և գիտական ղեկավար վերահաստատել՝ մ.գ.թ., պրոֆեսոր Ս.Մարությանին:

ԼՍԵՑԻՆ 4- Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարների կարծիքների և գրախոսությունների կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Նշված ժամանակահատվածում կազմակերպել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարների կարծիքները և գրախոսությունները կազմակերպել ըստ ԲՈՒՀ-ի կանոնակարգի:

Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ 5- Ամբիոնի և ՇԳԻ համագործակցության արդյունքում դեկտեմբեր ամսին նախատեսվող ՀՀ պետական մանկապարտեզների որոշակի թվով դաստիարակների համար առցանց վերապատրաստման նախապատրաստման և կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ա.Դալլաքյանը, Մ.Ամիրաղյանը

Ամբիոնի վարիչի պ/կ Վ.Կարապետյանը նշեց, որ ամբիոնի և ՇԳԻ համագործակցության արդյունքում դեկտեմբեր ամսին նախատեսվում է կազմակերպել «Շախմատը ՆՈՒՀ-ում» խորագրով առցանց վերապատրաստում՝ ՀՀ պետական մանկապարտեզների որոշակի թվով դաստիարակների համար: Քննարկման արդյունքում ամբիոնի դասախոսներ Ա.Դալլաքյանը և Մ.Ամիրաղյանը հանձն առան կազմակերպել վերապատրաստման ծրագիրը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հանձնարարել ամբիոնի պրոֆեսորի պ/կ Ա.Դալլաքյանին և մ.գ.թ.դասախոս՝ Մ.Ամիրաղյանին կազմել վերապատրաստման ծրագիրը, որով իրականացնելու են առցանց վերապատրաստումը: Արդյունքները քննարկել ամբիոնում:

Նիստի նախագահ՝ *Վ.Մ.Կարապետյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Է.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

2022 թ. մայիսի 2-ին տեղի ունեցած Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Հեռակա ուսուցման համակագի 5-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքների ներկայացում և հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը:
2. Ամփոփիչ ավարտական քննությունների նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին:
3. 2021-22 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստում:
4. Դասալսումների քննարկման հարցը:
5. Նախադպրոցական կրթության ոլորտի վերապատրաստումների մրցույթներին ամբիոնի կողմից հայտի ներկայացման հարցը:
6. Բուհի 100-ամյակին նվիրված միջոցառման քննարկում:

ԼՍԵՑԻՆ 1- Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի գծով ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների արդյունքների և հրապարակային պաշտպանության երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը,Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը, Ս.Հովսեփյանը, Մ.Ավագյանը, Ա.Խուգեյանը

- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 5-րդ կուրս թվով 38 ավարտական աշխատանք:

Նախապաշտպանությունները կազմակերպվել են 2 փուլով՝ ապրիլի 27-ին և 29-ին և կրկնակի նախապաշտպանությունը՝ մայիսի 12-ին և 13-ին՝ ամբիոնի կողմից նախապես ներկայացված ժամանակացույցով: Ուսանողները ներկայացնում էին իրենց ավարտական աշխատանքները՝ տեսասահիկով: Կային մեծ թվով աշխատանքներ, որոնք դեռևս ավարտուն տեսքի չէին և ուսանողներն այդքան էլ արդյունավետ չէին աշխատել:

ՈՐՈՇԵՑԻՆ-

1. Նախապաշտպանության արդյունքների վերլուծության հիման վրա (ապրիլի 27-29) երաշխավորել հրապարակային պաշտպանության թվով 21 ավարտական աշխատանք:
2. Նախապաշտպանության արդյունքների վերլուծության հիման վրա (ապրիլի 27-29) թվով 17 ավարտական աշխատանքներ չերաշխավորել հրապարակային պաշտպանության՝ առաջին նախապաշտպանության փուլով, քանի որ սույն աշխատանքներում կան բացթողումներ, անհրաժեշտ են կատարել շտկումներ: Որոշվեց չերաշխավորված ուսանողներին տրամադրել որոշակի ժամանակ, շտկումները կատարելու և ղեկավարների հետ աշխատելու համար և կրկնակի նախապաշտպանությունը կազմակերպել մայիսի 12-ին և 13-ին:

ԼՍԵՑԻՆ 2- Ամփոփիչ ավարտական քննությունների նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, Թ.Նալբանդյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Նախապատրաստվել ամփոփիչ ավարտական քննություններին, որոնք կազմակերպվելու են առերես ձևաչափով: Ամբիոնի մասնագետը նախապես հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը և տեղադրում ամփոփիչ ատեստավորման համապատասխան էլ.էջերում: Աշխատանքների տպագրված տարբերակները ներկայացնել ամբիոն նշված ժամկետներում:

ԼՍԵՑԻՆ 3- 2021-22 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 2-րդ կիսամյակի քննական առարկաների հարցաշարերն ու տոմսերը:

ԼՍԵՑԻՆ 4- Դասալսումների արդյունքների քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը

Ամբիոնի վարիչը ներկայացրեց յուրաքանչյուր դասախոսի ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ իր նկատառումները և քննարկումների արդյունքում եղան առաջարկներ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ընդունել ի գիտություն և շտկել ամբիոնի վարիչի պ/կ Ա.Մանուկյանի կողմից ներկայացված բացթողումները:

ԼՍԵՑԻՆ 5- Նախադպրոցական կրթության ոլորտի վերապատրաստումների մրցույթներին ամբիոնի կողմից հայտի ներկայացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը

Ամբիոնի վարիչը նշեց, որ հաշվի առնելով այն փաստը, որ ամբիոնի դասախոսական կազմի մեծ մասը պարբերաբար մասնակցում է հանրապետությունում տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվող նախադպրոցական ոլորտի մասնագիտական վերապատրաստումներին, կարևորեց, որ ամբիոնը, որպես ՀՀ միակ մասնագիտական ամբիոն, պետք է հնարավորության դեպքում ներգրավի վերապատրաստման գործընթացներին:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ամբիոնը հետևողական կլինի կազմակերպվող վերապատրաստումների մրցույթներին և կներկայացնի հայտ:

ԼՍԵՑԻՆ 6- Բուհի 100-ամյակին նվիրված միջոցառման քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը

Ա.Մանուկյանը նշեց, որ Բուհի 100-ամյակին նվիրված ամբիոնը, որպես 100-ամյա բուհի կայացման հիմք, ցանկալի է, որ կազմակերպի նախադպրոցական ոլորտի խնդիրների վերհանման և քննարկման միջոցառում, աշխատաժողով, որը նախատեսվում է իրականացնել հոկտեմբերի 8-ին: Կազմակերպվեց աշխատանքի բաժանում, աշխատաժողովի օրակարգի և հյուրերի ցանկի կազմում:

ՈՐՈՇԵՑԻՆ- Կազմակերպել «Սերունդների խաչմերուկ» խորագրով միջոցառում՝ նվիրված բուհի 100-ամյակին, որը նվիրված է լինելու նախադպրոցական կրթության նվիրյալներին և ոլորտի բացթողումների և խնդիրների քննարկմանը:

Նիստի նախագահ՝ *Ա.Մ.Մանուկյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Է.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

2022 թ. մայիսի 13-ին տեղի ունեցած Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի գծով ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների կրկնակի նախապաշտպանությունների արդյունքների և հրապարակային պաշտպանության երաշխավորման հարցը:

ԼՍԵՑԻՆ-Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի գծով ԲԿԾ հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների կրկնակի նախապաշտպանությունների արդյունքների և հրապարակային պաշտպանության երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, Վ.Կարապետյանը, Ա.Դալլաքյանը, Ք.Ասմարյանը, Մ.Ավագյանը, Ա.Խուգեյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Կրկնակի նախապաշտպանության արդյունքների վերլուծության հիման վրա (մայիսի 12-13) թվով 17 ավարտական աշխատանքները երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Նիստի նախագահ՝ *Ա.Մ.Մանուկյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Է.Նալբանդյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 13

2022 թ. հունիսի 6-ին տեղի ունեցած Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Ամփոփիչ ավարտական քննությունների արդյունքների քննարկում:
2. Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 2-րդ և 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկաների պաշտպանության, հաշվետվությունների ներկայացման արդյունքների քննարկում:
3. Ընթացիկ հարցեր:

Ամբիոնի, ՀՀ ԿԳՄՍՆ ԿԶՆԱԿ հիմնադրամի նախադպրոցական մասնագետի և պետական մանկապարտեզների ներկայացուցիչների հետ հանդիպման արդյունքների քննարկման հարցը։

ԼՍԵՑԻՆ 1- Ամփոփիչ ավարտական քննությունների արդյունքների քննարկման հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը

ՈՐՈՇԵՑԻՆ- Ամփոփիչ ավարտական քննությունների արդյունքներն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 2- Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿԾ 2-րդ և 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկաների պաշտպանության, հաշվետվությունների ներկայացման արդյունքների քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, Ա.Ղազարյանը

Նշված կուրսերի ուսումնաճանչողական և մանկավարժական պրակտիկաների պաշտպանությունները կազմակերպվել էր առերես, արդյունքները պրակտիկայի ղեկավարը ներկայացրեց հաշվետվության տեսքով։

ՈՐՈՇԵՑԻՆ- Ընդունել ի գիտություն և աշխատել բաղթողումների շտկման ուղղությամբ:

ԼՍԵՑԻՆ 3- Ամբիոնի, ՀՀ ԿԳՄՍՆ ԿԶՆԱԿ հիմնադրամի նախադպրոցական մասնագետի և պետական մանկապարտեզների ներկայացուցիչների հետ հանդիպման արդյունքների քննարկման հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Մանուկյանը, Վ.Կարապետյանը, Ա.Դալլաքյանը, Ս.Մարությանը, Մ.Ամիրաղյանը, Մ.Ավագյանը

Ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել էր հանդիպում Երևանի քաղաքապետարանի նախադպրոցական կրթության բաժնի, ՀՀ ԿԳՄՄՆ ԿԶՆԱԿ հիմնադրամի նախադպրոցական մասնագետի և պետական մանկապարտեզների ներկայացուցիչների հետ: Հանդիպման նպատակն էր մի շարք մասնագիտական և նախադպրոցական ոլորտի առաջնային հարցերի քննարկումը և շարունակական համագործակցությունը համապատասխան օղակների հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ- քննարկման արդյունքում ձևավորված առաջարկությունները ձևակերպել և ուղարկել ԿԳՄՍ նախարարության համապատասխան վարչություն: Նմանօրինակ հանդիպում-քննարկումները դարձնել պարբերական:

Նիստի նախագահ՝ *Ա.Մ.Մանուկյան*

Նիստի քարտուղար՝ *Թ.Է.Նալբանդյան*